



ՀՖՖ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ  
ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ  
ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2019 թ. խմբագրություն



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	4
Գլուխ I. Հասկացություններ.....	5
Գլուխ II. Կանոնակարգի գործողության ոլորտը.....	5
Գլուխ III. Ընդհանուր կանոնները.....	5
Գլուխ IV. Միջնորդների գրանցումը.....	6
Գլուխ V. Գրանցման պայմանները.....	6
Գլուխ VI. Ներկայացուցչական պայմանագիրը.....	7
Գլուխ VII. Տվյալների տրամադրումը և հրապարակումը.....	7
Գլուխ VIII. Վճարումներ միջնորդներին.....	8
Գլուխ IX. Շահերի բախումը.....	9
Գլուխ X. Պատժամիջոցները .....	10
Գլուխ XI. ՀՖՖ-ի պարտականությունների իրականացման վերահսկումը.....	10
Գլուխ XII. Միջանկյալ դրույթներ.....	10
Հավելված 1. Ֆիզիկական անձանց համար նախատեսված միջնորդի հոչակագիր.....	11
Հավելված 2. Իրավաբանական անձանց համար նախատեսված միջնորդի հոչակագիր .....	13



ՀՖՖ ՖՈՒՏՏՈՒԼԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Խմբագրություն 1	Ուժի մեջ է՝ 01.08.2019թ. - ից	Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 01.08.2019 թ-ին
-----------------	----------------------------------	---



## Ներածություն

ՖԻՖԱ-ն պատասխանատվություն է կրում ֆուտբոլի շարունակական զարգացման և նրա ամբողջականությունը պահպանելու հարցում: Այս առումով ՖԻՖԱ-ի գլխավոր նպատակներից է ակումբների, ֆուտբոլիստների և երրորդ անձանց միջև զարգացնել և պահպանել էթիկական բարձր ստանդարտներ՝ առաջնորդվելով բարեխիղճ կառավարման պահանջներով ու ֆինանսական պատասխանատվության սկզբունքներով:

ՖԻՖԱ-ն հատկապես կարևոր է համարում զերծ պահել ֆուտբոլիստներին ու ակումբներին աշխատանքային պայմանագրեր և տրանսֆերային համաձայնագրեր կնքելիս ոչ էթիկական և/կամ անօրինական գործողությունների մեջ ներքաշվելուց:

ՀՖՖ-ն իր հերթին պատասխանատվություն է կրում հայկական ֆուտբոլի շարունակական զարգացման և ամբողջականության պահպանման, ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈւԵՖԱ-ի և Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհրդի (IFAB) ֆուտբոլային միջազգային օրենքների՝ ՀՀ-ում կիրառման համար: Այս նպատակով, հիմնվելով ՖԻՖԱ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին տիպային կանոնակարգի վրա և հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները նշված ոլորտում՝ ՀՖՖ-ն հաստատում է սույն կանոնակարգը՝ միջնորդների ֆուտբոլային գործունեությունը ՀՀ-ում կանոնակարգելու նպատակով:

Նշում: Ֆիզիկական անձանց առնչվող տերմինները վերաբերում են ինչպես իգական և արական սեռերին, այնպես էլ իրավաբանական անձանց: Եզակի թվով գրված յուրաքանչյուր տերմին կիրառվում է նաև հոգնակի թվով և հակառակը:



## **Գլուխ I. Հասկացություններ**

1. **Միջնորդ**- ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով բանակցություններում անվճար կամ վճարի դիմաց հանդես է գալիս որպես ֆուտբոլիստների և/կամ ակումբների ներկայացուցիչ՝ վերջիններիս հետ աշխատանքային և/կամ տրանսֆերային պայմանագրի կնքումն ապահովելու նպատակով:
2. **Տրանսֆերային համաձայնագիր**- համաձայնագիր ակումբների միջև՝ ֆուտբոլիստի մեկ ակումբի հետ գործող պայմանագրի ընթացքում մեկ այլ ակումբ տեղափոխվելու մասին:
3. **Ներկայացուցչական պայմանագիր**- Ակումբի և/կամ ֆուտբոլիստի և միջնորդի միջև կնքված պայմանագիր, որտեղ մանրամասն ներկայացվում է միջնորդների հետ ունեցած իրավական հարաբերությունների բնույթը (օրինակ՝ ծառայություն, խորհրդատվություն, աշխատանքի տեղավորման աջակցություն կամ ցանկացած այլ իրավական հարաբերություն):

## **Գլուխ II. Կանոնակարգի գործողության ոլորտը**

Սույն կանոնակարգով կարգավորվում են ֆուտբոլիստների և ակումբների հարաբերությունները միջնորդների հետ՝ կապված ֆուտբոլիստի և ակումբի միջև աշխատանքային պայմանագրի և ակումբների միջև տրանսֆերային համաձայնագրի կնքման հետ:

## **Գլուխ III. Ընդհանուր կանոնները**

1. Ֆուտբոլիստներն ու ակումբներն իրենց աշխատանքային պայմանագրի և/կամ տրանսֆերային համաձայնագրի շուրջ բանակցությունները կարող են իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ֆուտբոլային միջնորդների միջոցով:
2. Միջնորդների ընտրության և ներգրավման գործընթացում ֆուտբոլիստներն ու ակումբները գործում են պատշաճ կերպով՝ երաշխավորելով «Միջնորդի հոչակագրի» և երկու կողմերի միջև կնքված ներկայացուցչական պայմանագրի պարտադիր ստորագրումը միջնորդի կողմից:
3. Միջնորդը, ով ներգրավվում է ֆուտբոլիստի՝ ակումբի հետ պայմանագրի շուրջ ընթացող բանակցություններում, համաձայն սույն կանոնակարգի Գլուխ IV-ի՝ ենթակա է պարտադիր գրանցման ՀՖՖ-ի կողմից:
4. Համաձայն ՖԻՖԱ-ի կանոնադրության «Սահմանումներ» բաժնի 11-րդ կետի՝ պաշտոնյաների ներգրավումը որպես միջնորդներ ֆուտբոլիստների և ակումբների կողմից արգելվում է:



### ***Գլուխ IV. Միջնորդների գրանցումը***

1. Ֆուտբոլիստների և ակումբների միջև ընթացող բանակցություններում թափանցիկությունն ապահովելու նպատակով ՀՖՖ-ն պարտավոր է կիրառել միջնորդների գրանցման համակարգ, որը հրապարակվում է՝ համաձայն Գլուխ VII-ի 3-րդ կետի: Միջնորդները, յուրաքանչյուր պայմանագրի շուրջ բանակցային գործընթացում ներգրավվելիս (տե՛ս սույն Գլխի 2-րդ և 3-րդ կետերը), գրանցվում են ՀՖՖ-ի գրանցման համակարգում:
2. Միջնորդի ծառայություններից օգտվող ակումբները և ֆուտբոլիստները ՀՖՖ ներկայացնում են առնվազն «Միջնորդի հոչակագիրը»՝ համաձայն սույն կանոնակարգի առաջին և երկրորդ հավելվածների: ՀՖՖ-ն կարող է պահանջել միջնորդին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր:
3. Համապատասխան գործարքի ավարտից հետո, սույն կանոնակարգի Գլուխ II-ի համաձայն միջնորդի ծառայություններից օգտվող ֆուտբոլիստը պարտավոր է ՀՖՖ ներկայացնել առնվազն «Միջնորդի հոչակագիր» և ՀՖՖ կողմից պահանջվող գործարքին վերաբերող ցանկացած այլ փաստաթուղթ: Աշխատանքային պայմանագրի շուրջ նոր բանակցությունների դեպքում միջնորդի ծառայություններից օգտվող ֆուտբոլիստը պարտավոր է նույն փաստաթղթերը կրկին ներկայացնել ՀՖՖ:
4. Համապատասխան գործարքի ավարտից հետո, սույն կանոնակարգի Գլուխ II-ի համաձայն՝ միջնորդի ծառայություններից օգտվող ակումբը ՀՖՖ է ներկայացնում առնվազն «Միջնորդի հոչակագիր» և ՀՖՖ կողմից պահանջվող գործարքին վերաբերող ցանկացած այլ փաստաթուղթ: Եթե ֆուտբոլիստին ազատ արձակող ակումբը ևս օգտվում է միջնորդի ծառայություններից, ապա նա նույնպես ՀՖՖ է ներկայացնում «Միջնորդի հոչակագիր» պատճենը:

### ***Գլուխ V. Գրանցման պայմանները***

1. Ի լրումն ֆուտբոլիստի և/կամ ակումբի կողմից Գլուխ IV-ով նախատեսված տեղեկատվության տրամադրման և մինչև տվյալ միջնորդի գրանցումը՝ ՀՖՖ-ն պետք է համոզվի, որ ներգրավված միջնորդն ունի անբասիր հեղինակություն:
2. Եթե միջնորդն իրավաբանական անձ է, ՀՖՖ-ն, որը պատասխանատու է տվյալ գործարքի գրանցման համար, պարտավոր է ձեռնարկել պատշաճ միջոցառումներ՝ պարզելու համար տվյալ գործարքի շրջանակներում իրավաբանական անձի անբասիր հեղինակությունը:
3. ՀՖՖ-ն, նախքան միջնորդի գրանցումը, պետք է նաև հավաստիանա, որ ակումբի և/կամ ֆուտբոլիստի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող միջնորդը չունի պայմանագրային հարաբերություններ լիգաների, այլ ասոցիացիաների, կոնֆեդերացիաների կամ ՖԻՖԱ-ի հետ, որն ուղղակիորեն կառաջացնի շահերի հնարավոր բախում: Միջնորդները պետք է բացառեն իրենց գործունեության շրջանակներում լիգաների, ասոցիացիաների,



կոնֆեդերացիաների կամ ՖԻՖԱ-ի հետ ուղղակի կամ անուղղակի պայմանագրային հարաբերությունների առկայությունը:

4. Ներկայացուցչական պայմանագրի մեկ օրինակը, որը միջնորդը ստորագրում է ակումբի և/կամ ֆուտբոլիստի հետ (տե՛ս Գլուխ VI-ը ստորև), միջնորդի գրանցումից հետո պահվում է ՀՖՖ-ում՝ առնվազն տաս տարի ժամկետով:

### ***Գլուխ VI. Ներկայացուցչական պայմանագիրը***

1. Ակումբներն ու ֆուտբոլիստները համապատասխան ներկայացուցչական պայմանագրում սահմանում են միջնորդների հետ ունեցած իրավական հարաբերությունների բնույթը և միջնորդների լիազորությունների շրջանակը (օրինակ՝ ծառայություն, խորհրդատվություն, աշխատանքի տեղավորման աջակցություն կամ ցանկացած այլ իրավական հարաբերություն):
2. Միջնորդի և ֆուտբոլիստի և/կամ միջնորդի և ակումբի միջև ձևավորված իրավական հարաբերության հիմնարար կետերը սահմանվում են գրավոր կերպով՝ նախքան նշված հարաբերությունների շրջանակներում որևէ գործունեություն ծավալելը: Ներկայացուցչական պայմանագիրը ընդգրկում է հետևյալ նվազագույն պահանջները՝ կողմերի օրենսդրությամբ սահմանված տվյալները, ծառայությունների շրջանակները, տևողությունը, միջնորդին հասանելիք պայմանագրի միջնորդավճարը, վճարման պայմանները, պայմանագրի կնքման ամսաթիվը, պայմանագրի լուծման հիմքերը, պայմանները և կողմերի ստորագրությունները: Ֆուտբոլիստի անչափահաս լինելու դեպքում վերջինիս օրինական ներկայացուցիչը (ներկայացուցիչները) ևս պետք է ստորագրի (ստորագրեն) ներկայացուցչական պայմանագիրը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

### ***Գլուխ VII. Տվյալների տրամադրումը և հրապարակումը***

1. Ֆուտբոլիստները և/կամ ակումբները պարտավոր են ՀՖՖ-ին տրամադրել միջնորդին վճարված կամ վճարման ենթակա ցանկացած բնույթի համաձայնեցված փոխհատուցումների կամ վճարումների ամբողջական տվյալները: Ի հավելումն վերոնշյալի՝ ֆուտբոլիստները և/կամ ակումբները հարցման դեպքում լիզաների, ասոցիացիաների, կոնֆեդերացիաների և ՖԻՖԱ-ի իրավասու մարմիններին հետագա ուսումնասիրության նպատակով տրամադրում են միջնորդների հետ կնքված և նրանց վերաբերող բոլոր պայմանագրերը, համաձայնագրերը և գրառումները՝ բացառությամբ ներկայացուցչական պայմանագրի, որի տրամադրումը պարտադիր է՝ համաձայն Գլուխ V-ի 4-րդ կետի:

Ֆուտբոլիստները և/կամ ակումբները պետք է համաձայնության գան միջնորդների հետ՝ հավաստիանալու, որ նշված տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրման համար առկա չէ որևէ խոչընդոտ:



2. Բոլոր վերոնշյալ պայմանագրերը կցվում են տրանսֆերային համաձայնագրին կամ աշխատանքային պայմանագրին՝ ֆուտբոլիստին գրանցելու նպատակով: Ակումբները և ֆուտբոլիստները ապահովում են միջնորդի մասնակցությամբ կնքված յուրաքանչյուր տրանսֆերային համաձայնագրի կամ աշխատանքային պայմանագրի մեջ միջնորդի անվան և ստորագրության առկայությունը: Եթե ֆուտբոլիստը և/կամ ակումբը բանակցությունների ժամանակ չեն օգտվում միջնորդի ծառայություններից, ապա նրանք պարտավոր են արձանագրել այդ փաստը տվյալ գործարքի վերաբերյալ կնքված համապատասխան պայմանագրում:
3. Յուրաքանչյուր տարվա մարտ ամսվա վերջին ՀՖՖ-ն իր պաշտոնական կայքում (<http://www.ffa.am>) հրապարակում է իր կողմից գրանցված բոլոր միջնորդների անունները, ինչպես նաև բոլոր այն գործարքները, որոնցում նրանք ներգրավվել են: Ի լրումն, ՀՖՖ-ն հրապարակում է նաև գրանցված ֆուտբոլիստների և վերջիններիս ակումբների կողմից միջնորդներին տրամադրված փոխհատուցումների և վճարումների հանրագումարի մասին տվյալները: Հրապարակման ենթակա տվյալներն են՝ բոլոր ֆուտբոլիստների գծով կոնսոլիդացված հանրագումարը և ակումբների գծով՝ նրանցից յուրաքանչյուրի կոնսոլիդացված հանրագումարը:
4. ՀՖՖ-ն առանձին դեպքերում կարող է նաև ֆուտբոլիստների և ակումբների համար հասանելի դարձնել սույն կանոնակարգի դրույթների խախտմամբ կնքված գործարքների մասին տեղեկատվությունը:

### **Գլուխ VIII. Վճարումներ միջնորդներին**

1. Ֆուտբոլիստի անունից գործող միջնորդին վճարման ենթակա փոխհատուցման գումարը հաշվարկվում է պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի համար ֆուտբոլիստին վճարվող աշխատավարձի հիման վրա:
2. Միջնորդի ծառայություններից օգտվող ակումբները պետք է նրան միանվագ կերպով փոխհատուցեն գումարը տվյալ գործարքի կնքումից առաջ: Կողմերի համաձայնության դեպքում նման վճարումը կարող է իրականացվել նաև մաս առ մաս:
3. Ֆուտբոլիստները և ակումբները պետք է հաշվի առնեն ազգային կանոնակարգերը և ազգային ու միջազգային օրենսդրության դրույթները: Նրանց խորհուրդ է տրվում հետևել ներքոնշյալ չափորոշիչներին՝
  - ա) ֆուտբոլիստի անունից հանդես եկող միջնորդներին յուրաքանչյուր գործարքից վճարվող ամբողջական փոխհատուցման գումարը պետք է չգերազանցի տվյալ աշխատանքային պայմանագրով նախատեսված ամբողջական ժամանակահատվածի համար նրան վճարման ենթակա աշխատավարձի 3 տոկոսը:
  - բ) ֆուտբոլիստի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու նպատակով ակումբի անունից հանդես եկող միջնորդներին յուրաքանչյուր գործարքից





վճարվող ամբողջական փոխհատուցման գումարը պետք է չգերազանցի աշխատանքային համապատասխան պայմանագրով նախատեսված ամբողջական ժամանակահատվածի համար նրան վճարման ենթակա վերջնական աշխատավարձի 3 տոկոսը:

գ) ֆուտբոլիստի հետ տրանսֆերային համաձայնագիր կնքելու նպատակով ակումբի անունից հանդես եկող միջնորդներին յուրաքանչյուր գործարքից վճարվող ամբողջական փոխհատուցման գումարը պետք է չգերազանցի ֆուտբոլիստի տվյալ տեղափոխության հետ կապված տրանսֆերային գումարի 3 տոկոսը:

4. Ակումբները պետք է հավաստիանան և երաշխավորեն, որ ֆուտբոլիստի տեղափոխության հետ կապված մեկ ակումբից մյուսին վճարվող գումարները՝ մասնավորապես, տրանսֆերային փոխհատուցումը, մարզումային փոխհատուցումը կամ համերաշխության վճարները չեն վճարվում միջնորդներին կամ միջնորդների կողմից: Սա ներառում է, բայց չի սահմանափակում տրանսֆերային ցանկացած փոխհատուցման կամ ֆուտբոլիստի ապագա տրանսֆերային արժեքում միջնորդային տոկոսի առկայությունը: Նրանց կողմից նման պահանջների ներկայացումը ևս արգելվում է:
5. Համաձայն սույն Գլխի 6-րդ կետի և ներքոնշյալ Գլուխ IX-ի՝ միջնորդի ծառայությունների դիմաց կատարված յուրաքանչյուր վճարում պետք է իրականացվի բացառապես միջնորդին ներգրավողի կողմից՝ միջնորդին:
6. Համապատասխան գործարքը կնքելուց հետո և ըստ ակումբի համաձայնագրի՝ ֆուտբոլիստը կարող է իր գրավոր համաձայնությունը տալ ակումբին իր անունից միջնորդին վճարելու համար: Ֆուտբոլիստի անունից կատարված վճարումը պետք է համապատասխանի ֆուտբոլիստի և միջնորդի միջև համաձայնեցված վճարման պայմաններին:
7. Պաշտոնյաներին, համաձայն ՖԻՖԱ-ի Կանոնադրության «Սահմանումներ» բաժնի 11-րդ կետի սահմանման, արգելվում է միջնորդից վերցնել գործարքի ընթացքում միջնորդին վճարված գումարի մի մասը կամ գումարն ամբողջությամբ: Վերոնշյալ դրույթը խախտող պաշտոնյան ենթարկվում է կարգապահական պատժամիջոցների:
8. Աշխատանքային պայմանագրի կամ տրանսֆերային համաձայնագրի շուրջ բանակցելու ընթացքում միջնորդի ծառայություններից օգտվող ֆուտբոլիստներին և/կամ ակումբներին արգելվում է վճարել տվյալ միջնորդին, եթե ներգրավված ֆուտբոլիստը, համաձայն ՀՖՏ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի «Սահմանումներ» բաժնի 19-րդ կետի, անչափահաս է:

### ***Գլուխ IX. Շահերի բախումը***

1. Միջնորդի ծառայություններից օգտվելուց առաջ ֆուտբոլիստները և/կամ ակումբները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի բացառեն շահերի բախման հնարավորությունը ֆուտբոլիստների և/կամ ակումբների կամ միջնորդների միջև:



2. Շահերի բախումն ընդունելի կհամարվի, եթե միջնորդը գրավոր կերպով տեղեկացնի ներգրավված կողմերից որևէ մեկի հետ առկա կամ հնարավոր շահերի բախման մասին՝ կապված տեղափոխման գործարքի, ներկայացուցչական կամ համատեղ շահերի պայմանագրերի հետ, և, եթե նա բանակցությունները սկսելուց առաջ ձեռք է բերել գրավոր համաձայնություն գործարքում ներգրավված բոլոր կողմերի հետ:
3. Եթե ֆուտբոլիստն ու ակումբը, համաձայն սույն Գլխի 2-րդ կետում նշված պայմանների, նույն գործարքի շրջանակներում ցանկանում են օգտվել միևնույն միջնորդի ծառայություններից, ապա ներգրավված կողմերը պետք է իրենց գրավոր համաձայնությունը տան համապատասխան բանակցությունները սկսելուց առաջ և նաև գրավոր հաստատեն, թե որ կողմն է (ֆուտբոլիստը և/կամ ակումբը) փոխհատուցելու միջնորդին: Կողմերը նման համաձայնագրի մասին պետք է տեղեկացնեն ՀՖՖ-ին և համապատասխանաբար ներկայացնեն բոլոր նշված փաստաթղթերը գրանցման գործընթացի ընթացքում (տե՛ս Գլուխ IV և Գլուխ V):

### ***Գլուխ X. Պատժամիջոցները***

1. Ելնելով իր իրավասությունից՝ ՀՖՖ-ն կարող է պատժամիջոցներ կիրառել բոլոր այն կողմերի նկատմամբ, ովքեր խախտել են սույն կանոնակարգի, ՀՖՖ կանոնադրության և այլ կանոնակարգերի դրույթները:
2. ՀՖՖ-ն պարտավոր է համապատասխանաբար հրապարակել և տեղեկացնել ՖԻՖԱ-ին ցանկացած միջնորդի նկատմամբ կիրառված կարգապահական պատժամիջոցների մասին: ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն, համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի, իրավասու է որոշելու կիրառված պատժամիջոցի շրջանակների ընդլայնման հարցը:

### ***Գլուխ XI. ՀՖՖ-ի պարտականությունների իրականացման վերահսկումը***

1. ՖԻՖԱ-ն վերահսկում է սույն պահանջների պատշաճ իրականացումը ՀՖՖ-ի կողմից և իրավասու է ձեռնարկել համապատասխան քայլեր՝ նշված կանոններին չհետևելու դեպքում:
2. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն իրավասու այն մարմինն է, որը կարող է նման դեպքերում կայացնել որոշումներ՝ համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի դրույթների:

### ***Գլուխ XII. Միջանկյալ դրույթներ***

1. Սույն Կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 01.08.2019 թ-ին:
2. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:



## Հավելված 1. Ֆիզիկական անձանց համար նախատեսված միջնորդի հոշակագիր

Անուն:

Ազգանուն:

Ծննդյան թիվ:

Քաղաքացիություն//:

Բնակության հասցե (հեռախոսահամարը/ֆաքսը և էլեկտրոնային հասցեն):

Ես, \_\_\_\_\_,

(միջնորդի անուն, ազգանուն)

հայտարարում եմ հետևյալը՝

1. Որպես միջնորդ գործունեություն ծավալելիս՝ ես խոստանում եմ հարգել և ենթարկվել ազգային և միջազգային օրենքների պարտադիր, մասնավորապես, աշխատանքի տեղավորմանը վերաբերող դրույթներին, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնադրություններին և կանոնակարգերին:
2. Ես հայտարարում եմ, որ ներկայումս չեմ հանդիսանում պաշտոնյա՝ համաձայն ՖԻՖԱ-ի կանոնադրության «Սահմանումներ» բաժնի 11-րդ կետի սահմանման, և չեմ զբաղեցնելու նման պաշտոն տեսանելի ապագայում:
3. Ես հաստատում եմ, որ ունեմ անբասիր հեղինակություն և, մասնավորապես, իմ հանդեպ երբևէ չի հարուցվել քրեական գործ որևէ հանցանքի համար:
4. Ես հայտարարում եմ, որ չունեմ որևէ պայմանագրային հարաբերություն լիգաների, ասոցիացիաների, կոնֆեդերացիաների կամ ՖԻՖԱ-ի հետ, որոնք կարող են հանգեցնել շահերի պոտենցիալ բախման: Անորոշության դեպքում ցանկացած առնչվող պայմանագիր ենթակա է հրապարակման: Միաժամանակ ես հաստատում եմ, որ, որպես միջնորդ գործունեություն ծավալելիս, ուղղակիորեն կամ անուղղակիորեն գերծ կմնամ լիգաների, ասոցիացիաների, կոնֆեդերացիաների կամ ՖԻՖԱ-ի հետ նման պայմանագրային հարաբերությունները հրապարակայնացնելուց:
5. Ես հաստատում եմ, որ, համաձայն ՖԻՖԱ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VIII-ի 4-րդ կետի, չեմ ընդունի մեկ ակումբի կողմից մյուսին վճարվող որևէ գումար՝ կապված ֆուտբոլիստի տեղափոխության, մասնավորապես, տրանսֆերային փոխհատուցման, մարզումային փոխհատուցման կամ համերաշխության վճարների հետ:
6. Ես հաստատում եմ, որ, համաձայն ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VIII-ի 8-րդ կետի, չեմ ընդունի որևէ վճարում ցանկացած կողմից, եթե ֆուտբոլիստը համարվում է անչափահաս, ինչպես սահմանված է ՀՖՖ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի «Սահմանումներ» բաժնի 19-րդ կետով:



7. Ես հաստատում եմ, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեմ մասնակցի և իմ անունը չի շոշափվի խաղադրույքներ կատարելու, զվարճալի խաղերի և վիճակախաղերի, ինչպես նաև ֆուտբոլային խաղերի հետ կապված նմանատիպ այլ միջոցառումների կամ գործարքների հետ: Ես գիտակցում եմ, որ ինձ արգելված է ունենալ բաժնետոմսեր նման միջոցառումների և գործարքների պրոպագանդայով և կազմակերպմամբ զբաղվող ընկերություններում, կոնցեռններում և կազմակերպություններում:
8. Ես համաձայն եմ, ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VII-ի առաջին կետի, որպես միջնորդ իմ գործունեությունը ծավալելիս՝ ՀՖՖ-ին տրամադրել ակումբի կամ ֆուտբոլիստի կողմից ինձ կատարված ցանկացած բնույթի վճարման մասին ամբողջական տվյալները:
9. Ես համաձայն եմ, ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VII-ի առաջին կետի, անհրաժեշտության դեպքում լիզաներին, ասոցիացիաներին, կոնֆեդերացիաներին կամ ՖԻՖԱ-ին ուսումնասիրության նպատակով տրամադրել բոլոր պայմանագրերը, համաձայնագրերը և գրառումները՝ կապված որպես միջնորդ իմ գործունեություն ծավալելու հետ: Ես նաև համաձայնություն եմ տալիս վերոնշյալ մարմիններին իմ պատասխանատվությամբ իրականացվող բանակցությունների մեջ խորհրդատվական և տարբեր գործառույթներ իրականացնող կամ այլ ակտիվ մասնակցություն ունեցող ցանկացած անձից ձեռք բերելու համապատասխան փաստաթղթեր:
10. Ես համաձայն եմ, ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VII-ի 3-րդ կետի, հրապարակման նպատակով ՀՖՖ-ին տրամադրել տեղեկատվությանը տիրապետելու և տարածելու իրավունքը:
11. Ես համաձայն եմ, ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ X-ի 2-րդ կետի, ՀՖՖ-ին տրամադրել իմ դեմ կարգապահապական պատժամիջոցների մանրամասների հրապարակման և ՖԻՖԱ-ին այդ մասին տեղեկացնելու իրավունքը:
12. Ես ամբողջովին տեղյակ և համաձայն եմ, որպեսզի այս հռչակագիրը հասանելի լինի ՀՖՖ-ի իրավասու մարմինների անդամներին:
13. Դիտարկումներ և նկատառումներ

---

Ես ստորագրում եմ ինձ հասանելի տեղեկատվության և նյութերի վրա հիմնված այս հռչակագիրը և համաձայն եմ, որ ՀՖՖ-ն իրավասու է անցկացնել անհրաժեշտ ստուգումներ սույն հռչակագրում պարունակվող տեղեկատվությունը հաստատելու նպատակով: Ես նաև ընդունում եմ, որ հռչակագրի մեջ պարունակվող ցանկացած տեղեկատվության փոփոխության դեպքում պետք է անմիջապես տեղեկացնեմ ՀՖՖ-ին:

---

(Վայր և ամսաթիվ)

---

(Ստորագրություն)



## Հավելված 2. Իրավաբանական անձանց համար նախատեսված միջնորդի հոշակագիր

Ընկերության անուն (իրավաբանական անձ):

Ընկերության (այսուհետև՝ «ընկերություն») հասցե (ներառյալ հեռախոսահամարը/ֆաքսը, էլեկտրոնային հասցեն և վեբ-կայքը), գրանցման համար, գրանցման ամսաթիվ:

Վերոնշյալ ընկերությունը (իրավաբանական անձին) ներկայացնելու լիազորություններ ունեցող անձի (անձանց) անուն, ազգանուն:

Նշում: Ընկերության անունից հանդես եկող յուրաքանչյուր անհատ պետք է ստորագրի անհատական միջնորդի հոշակագիր:

Ես, \_\_\_\_\_, (իրավաբանական անձին ներկայացնող անհատի անուն/անուններ, ազգանուն/ազգանուններ) լիազորություններ ունենալով ներկայացնելու նշված ընկերությունը, հայտարարում եմ հետևյալը՝

1. Որպես միջնորդ գործունեություն ծավալելիս՝ ես և ընկերությունը, որը ես ներկայացնում եմ, խոստանում ենք հարգել և ենթարկվել ազգային և միջազգային օրենքների պարտադիր, մասնավորապես, աշխատանքի տեղավորմանը վերաբերող դրույթներին, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնադրություններին և կանոնակարգերին:
2. Ես հայտարարում եմ, որ ներկայումս չեմ հանդիսանում պաշտոնյա՝ համաձայն ՖԻՖԱ-ի կանոնադրության «Սահմանումներ» բաժնի 11-րդ կետի սահմանման, և չեմ զբաղեցնելու նման պաշտոն տեսանելի ապագայում:
3. Ես հաստատում եմ, որ ես ունեմ անբասիր հեղինակություն և, մասնավորապես, իմ հանդեպ երբևէ չի հարուցվել քրեական գործ որևէ հանցանքի համար:
4. Ես հայտարարում եմ, որ ո՛չ ես, ո՛չ ընկերությունը, որը ես ներկայացնում եմ, չունենք որևէ պայմանագրային հարաբերություններ լիգաների, ասոցիացիաների, կոնֆեդերացիաների կամ ՖԻՖԱ-ի հետ, որոնք կարող են հանգեցնել շահերի հնարավոր բախմանը: Անորոշության դեպքում ցանկացած առնչվող պայմանագիր ենթակա է հրապարակման: Միաժամանակ ես հաստատում եմ, որ, որպես միջնորդ գործունեություն ծավալելիս, համապատասխան ընկերությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն զերծ կմնա լիգաների, ասոցիացիաների, կոնֆեդերացիաների կամ ՖԻՖԱ-ի հետ նման պայմանագրային հարաբերություններ հաստատելուց:
5. Ես հաստատում եմ, որ, համաձայն ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VIII-ի 4-րդ կետի, ո՛չ ես, ո՛չ ընկերությունը, որը ես



ներկայացնում եմ, պետք է չընդունենք մեկ ակումբի կողմից մյուսին վճարվող որևէ գումար՝ կապված ֆուտբոլիստի տեղափոխության, մասնավորապես, տրանսֆերային փոխհատուցման, մարզումային փոխհատուցման կամ համերաշխության վճարների հետ:

6. Ես հաստատում եմ, որ, համաձայն ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VIII-ի 8-րդ կետի, ո՛չ ես, ո՛չ ընկերությունը, որը ես ներկայացնում եմ, պետք է չընդունենք որևէ վճարում ցանկացած կողմից, եթե ֆուտբոլիստը, համաձայն ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի «Մահմանումներ» բաժնի 19-րդ կետի, անչափահաս է:
7. Ես հաստատում եմ, որ ո՛չ ես, ո՛չ ընկերությունը, որը ես ներկայացնում եմ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն մասնակցի և մեր անունը չի շոշափվի խաղադրույքներ կատարելու, զվարճալի խաղերի և վիճակախաղերի, ինչպես նաև ֆուտբոլային խաղերի հետ կապված նմանատիպ այլ միջոցառումների կամ գործարքների հետ: Ես գիտակցում եմ, որ թե՛ ինձ, թե՛ ընկերությանը, որը ես ներկայացնում եմ, արգելված է ունենալ բաժնետոմսեր նման միջոցառումների և գործարքների պրոպագանդայով և կազմակերպմամբ զբաղվող ընկերություններում, կոնցեռններում և կազմակերպություններում:
8. Որպես միջնորդ գործունեություն ծավալելիս, հանդիսանալով ընկերության ներկայացուցիչ, ես համաձայն եմ ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VII-ի առաջին կետի՝ ՀՖՖ-ին տրամադրել ակումբի կամ ֆուտբոլիստի կողմից ընկերությանը տրամադրած ցանկացած բնույթի վճարման մասին ամբողջական տվյալներ:
9. Որպես ընկերության ներկայացուցիչ՝ ես համաձայն եմ ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VII-ի առաջին կետի՝ լիգաներին, ասոցիացիաներին, կոնֆեդերացիաներին կամ ՖԻՖԱ-ին ուսումնասիրության նպատակով, անհրաժեշտության դեպքում տրամադրել բոլոր պայմանագրերը, համաձայնագրերը և գրառումները՝ կապված որպես ընկերության միջնորդ իմ գործունեություն ծավալելու հետ: Ես նաև համաձայնություն եմ տալիս վերոնշյալ մարմիններին իմ կողմից ներկայացվող ընկերության պատասխանատվությամբ իրականացվող բանակցությունների մեջ խորհրդատվական և տարբեր գործառույթներ իրականացնող կամ այլ ակտիվ մասնակցություն ունեցող ցանկացած անձից ձեռք բերելու համապատասխան փաստաթղթեր:
10. Որպես ընկերության ներկայացուցիչ՝ ես համաձայն եմ ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ VII-ի 3-րդ կետի, հրապարակման նպատակով ՀՖՖ-ին տրամադրել տեղեկատվությանը տիրապետելու և տարածելու իրավունքը:
11. Որպես ընկերության ներկայացուցիչ՝ ես համաձայն եմ ըստ ՀՖՖ-ի Միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի Գլուխ X-ի 2-րդ կետի՝ ՀՖՖ-ին տրամադրել իմ ներկայացրած ընկերության դեմ կարգապահապական պատժամիջոցների մանրամասների հրապարակման և ՖԻՖԱ-ին՝ այդ մասին տեղեկացնելու իրավունքը:
12. Ես ամբողջովին տեղյակ և համաձայն եմ, որպեսզի այս հռչակագիրը հասանելի լինի ՀՖՖ-ի իրավասու մարմինների անդամներին:



### 13. Դիտարկումներ և նկատառումներ

---

Ես ստորագրում եմ ինձ հասանելի տեղեկատվության և նյութերի վրա հիմնված այս հռչակագիրը և համաձայն եմ, որ ՀՖՖ-ն իրավասու է անցկացնել անհրաժեշտ ստուգումներ սույն հռչակագրում պարունակվող տեղեկատվությունը հաստատելու նպատակով: Ես նաև ընդունում եմ, որ հռչակագրի մեջ պարունակվող ցանկացած տեղեկատվության փոփոխության դեպքում, ես պետք է անմիջապես տեղեկացնեմ ՀՖՖ-ին:

---

(Վայր և ամսաթիվ)

---

(Ստորագրություն)



## ՀՖՖ Ֆուտբոլային միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի աշխատանքային խումբ

- Նաիրա ԱԲՐԱՄՅԱՆ                    ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ, Տրանսֆերների համադրման համակարգի (ՏՀՀ) պատասխանատու

## ՀՖՖ Ֆուտբոլային միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգի ստեղծմանը նպաստել են՝

- Արթուր ԱԶԱՐՅԱՆ                    ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար, ՀՖՖ Գլխավոր քարտուղարի տեղակալ
- Լիլիթ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ                    ՀՖՖ Ավագ իրավախորհրդատու

Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա  
0010 Երևան, Խանջյան 27  
Հեռ.: +374 11 88 88 08  
Էլ. հասցե: [ffa@ffa.am](mailto:ffa@ffa.am),  
<http://www.ffa.am>